

հեռանալով, լատին սրբազան կարգերը կ'ընդունէին անոնց կանոններով եւ սովորոյթներով. այս պատճառաւ, ներկայիս, Հայ Ազգէն բազմաթիւ կրօնաւորներ կը գտնուին դոմինիկեան, փրանկիսկեան եւ կարմեղեան կարգերուն մէջ, որոնք շատ հմուտ են, եւ կամ վարժապետ են, կամ քարոզիչ կամ վանահայր: Իսկ Հայ եկեղեցիներուն մէջ ոչ մէկ վարդապետ կար, ոչ ալ քարոզիչ մը, այլ մեծ անգիտութիւն մը աստուածային իրերու եւ շփոթութիւն. հոս չկար ուսուցիչ մը, որ հայ լեզուով կարենար գիտութիւններն աւանդել. եւ նոյնիսկ Հայ լեզուն կորսուած էր, որովհետեւ օրէ օր կը պակասէր, կ'անհետանար հայ ցեղն ու եկեղեցին, անցնելով լատին ծէսին եւ ազգին: Հետեւաբար, այս պատճառաւ սիրելի դաւակներդ զիս այս քաղաքը կանչեցին, որպէսզի հայոց համար հիմնուէր նոր եւ մասնաւոր վարժարան մը, ուր պատանիները սորվէին իմաստասիրական եւ աստուածարանական գիտութիւնները ոչ միայն լատիներէն, այլ նաեւ հայերէն, եւ այդպէս իրենց եկեղեցիները շուտով փայլէին իրենց ծէսին պատկանող գիտուն եւ կրօնասէր պաշտօնեաներով:

Այս նպատակաւ մեր Սրբազնազոյն Տէրը, Աղեքսանդր Պապ է., որ ինչպէս կը ցանկայ միութիւնը կաթողիկէ Հաւատքն ունեցող քրիստոնեաներուն, նոյնպէս ալ կը մերժէ թէ՛ դաւանակից ազգերու իրարխառնումը թէ՛ ջնջումը անոնց ծէսերուն, որոնք ուղիղ են իւրաքանչիւր ցեղի մէջ եւ գովելի, անոնց